

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրինության

2022 թ.-ի հուլիսի 20-ի թիվ [FC0004DEC#22/07/20-01/01](#) որոշմամբ


## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող  
աճուրդների



«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ուժի մեջ է մտնում 2022թ-ի սեպտեմբերի 19-ից

	Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների ընթացակարգ	FC1040PRC#02
		PUBLIC
		20/07/2022

## ՆՊԱՏԱԿԸ

«Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների ընթացակարգի»-ի (այսուհետ՝ Ընթացակարգ) նպատակն է կարգավորել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվող աճուրդների հետ կապված հարաբերությունները:

## ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընթացակարգով սահմանված նորմերը տարածվում են բոլոր տեսակի ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա, որոնք օրենքով սահմանված կարգով կարող են մասնակցել էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին:

## ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք	
ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	
«Գույքի բռնագանձումների ծառայության կանոնակարգ»	FC1040REG#01
<b>Հավելվածներ</b>	
Հավելված 1 Աճուրդի արդյունքների մասին արձանագրություն	APD#01 (FC1040PRC#02)
Հավելված 2 Առքուվաճառքի պայմանագիր	APD#02 (FC1040PRC#02)
Հավելված 3 Հանձնման-ընդունման ակտ	APD#03 (FC1040PRC#02)

## ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններ (այսուհետ՝ Աճուրդ)**՝ Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող են համարվում այն սակարկությունները, որոնք իրականացվում են էլեկտրոնային եղանակով և համապատասխանում են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջներին, բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների, **Էլեկտրոնային համակարգեր**՝ էլեկտրոնային համակարգեր են համարվում սակարկությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, ինտերնետային հասցեն, տեխնիկական լուծումները և բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման, իրականացման և ավտոմատ եղանակով հաղթողին որոշելու համար,

**Էլեկտրոնային աճուրդ**՝ Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին,

**Աճուրդի ընթացակարգ**՝ Կազմակերպության սահմանած փաստաթուղթ, որում նախատեսվում են օրենսդրությանը համապատասխան կազմակերպչի կողմից սահմանման ենթակա դրույթներ,



**Լուս՝** Էլեկտրոնային աճուրդով վաճառվող ցանկացած շարժական կամ անշարժ գույք կամ գույքային իրավունք, որն ունի համապատասխան նկարագրություն, սույն ընթացակարգով նախատեսված այլ տվյալներ նաև մեկնարկային գին,

**Մեկնարկային գին՝** Լուսի վաճառքի համար նախատեսված գին, որն Էլեկտրոնային աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին,

**Գնային հայտի ներկայացում՝** Էլեկտրոնային աճուրդի ընթացքում մասնակցի կողմից կատարված գնային առաջարկ, որի չափը չի կարող պակաս լինել սակարկության կազմակերպչի կողմից նախապես սահմանված նվազագույն հավելման չափից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Ընթացակարգով,

**Գնման գին՝** Էլեկտրոնային աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի ներկայացրած վերջին ամենաբարձր գնային հայտ,

**Աճուրդի հաղթող՝** մասնակից, որն Էլեկտրոնային աճուրդի ամփոփման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ ներկայացրել է առավելագույն գնային առաջարկ,

**Գույքի բռնագանձումների ծառայություն՝** Կազմակերպության առանձին կառուցվածքային միավոր, որի գործունեության սկզբունքներն ու կարգը սահմանված են «Գույքի բռնագանձումների ծառայության» կանոնակարգով (**FC1040REG#01**):

**Աճուրդի մասնակցության վճար՝** գումար, որը սառեցվում է մասնակցից աճուրդի կազմակերպչի կողմից աճուրդին մասնակցելու դիմաց:

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների միջոցով Կազմակերպությունը հնարավորություն է ստանում գրավի առարկա հանդիսացող կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող ցանկացած տեսակի շարժական կամ անշարժ գույք իրացնել, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ստանում նշված գույքերը ձեռք բերել ավելի արագ և պարզ ընթացակարգերով:

1.2. Աճուրդին ներկայացվող գրավի առարկաների ընտրության, մեկնարկային գնի սահմանման, Աճուրդների անցկացման հաճախականությունը, ժամը և այլ գործընթացներ կարգավորվում են «Գույքի բռնագանձումների ծառայության» կանոնակարգով (**FC1040REG#01**):

1.3. Կազմակերպության Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգ է հանդիսանում [www.fcachurd.am/www.fcauction.am](http://www.fcachurd.am/www.fcauction.am) կայքը (այսուհետ՝ Կայք):

1.4. Աճուրդի մասնակցել ցանկացող անձանց գրանցումը Կայքում կատարվում է անվճար:

1.5. Անճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձինք:

1.6. Աճուրդի անցկացման տեխնիկական նկարագիրը ներկայացված է Կայքում:

1.7. Աճուրդն անցկացվում է լուսի մեկնարկային գնի բարձրացմամբ:

1.8. Աճուրդի անցկացման օրը և ժամը հրապարակվում է Կայքի «Առաջիկա աճուրդներ» բաժնում՝ Աճուրդի անցկացումից առնվազն 2 (երկու) օր առաջ: Սույն կետում նշված գործառնության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Գույքի բռնագանձումների ծառայությունը:

1.9. Աճուրդի տևում է մինչև տվյալ Աճուրդում ներառված վերջին լուսի վերջին քայլը (Bid): Ընդ որում քայլի (Bid) նվազագույն չափը 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ է:



1.10. Կազմակերպությունը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը: Աճուրդի մասնակիցների անձնական տվյալները չեն կարող տրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.11. Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ, կամ ի հայտ է եկել ծրագրային խափանումներ և տեխնիկական խնդիրներ: Ընդ որում աճուրդը կարող է Բռնագանձման ծառայության ղեկավարի կողմից համարվել չկայացած ծրագրային խափանումների և տեխնիկական խնդիրների դեպքում, որոնք առաջացել են Աճուրդի անցկացման ընթացքում:

1.12. Աճուրդը չկայացած է հայտարարվում նշված հանգամանքների ի հայտ գալու հաջորդ օրվանից ոչ ուշ, որի մասին հրապարակվում է Կայքի Նորություններ բաժնում: Սույն կետով նշված գործառույթի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Գույքի բռնագանձումների ծառայության կողմից:

1.13. Չկայացված Աճուրդների մասնակիցների Մասնակցության վճարը (առկայության դեպքում) ապաստանեցվում են 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

1.14. Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով:

1.15. Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետևանքներ՝ օրենքով սահմանված կարգով:

**Մասնակցության վճարի կիրառում.**

1.16. Աճուրդին մասնակցելու համար օգտատիրոջ՝ Կայքում կցված բանկային քարտից կարող է ստեղծվել Մասնակցության վճար, որի չափը սահմանվում է Կազմակերպության այդ պահին գործող Ոչ ֆինանսական ծառայության սակագներով, որն էլ հրամապարկվում է Կազմակերպության կայքէջում (fastcredit.am):

1.17. Յուրաքանչյուր աճուրդի դիմաց ստեղծվում է առանձին Մասնակցության վճար:

1.18. Եթե վերջին 3 (երեք) ամսվա ընթացքում Աճուրդի մասնակիցը ունեցել է 5 (հինգ) անընդմեջ գնում, ապա մասնակիցը կարող է դասակարգվել, որպես հավատարիմ օգտատեր և նրա նկատմամբ Մասնակցության վճար չի կիրառվի, մինչև վերջինիս կողմից հերթական հաղթած Աճուրդում ներառված լոտերի ամբողջական ձեռքբերումից հրաժարվելը, որից հետո տեղի կունենա մասնակիցի կարգավիճակի հետդասակարգում:

1.19. Աճուրդի ընթացքում եթե մասնակիցը որևէ լոտ չի հաղթում կամ հաղթում և ձեռք է բերում հաղթած լոտերից առնվազն մեկը, ապա Մասնակցության վճարը ապաստանեցվում է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ պարագայում այն գանձվում է որպես տուգանք:

**2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

2.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով անձը պետք է մուտք գործի Կայք և գրանցի համապատասխան պատուհանի միջոցով, ընդ որում գրանցման համար պարտադիր են ներքոնշյալ տվյալների և փաստաթղթերի տրամադրումը.

- 1) Անուն, ազգանուն և հայրանուն (Իրավաբանական անձանց դեպքում ֆիրմային անվանումը),
- 2) Ծննդյան օր, ամիս և տարեթիվ (Իրավաբանական անձանց դեպքում Գրանցման ամսաթիվը),
- 3) Ծննդյան վայրը (Իրավաբանական անձանց դեպքում ֆիրմային գտնվելու վայրը),



- 4) Հաշվառման հասցեն (առկայության դեպքում):
  - 5) Բջջային հեռախոսահամար,
  - 6) Էլեկտրոնային փոստի հասցե,
  - 7) Անձնագրի սերիան, համար, տրամադրող մարմնի համարը, տրման ամսաթիվը, (Իրավաբանական անձանց դեպքում գրանցման համարը, ՀՎՀՀ-ն),
  - 8) Անձնագրի լուսապատճեն (Իրավաբանական անձանց դեպքում պետական գրանցման վկայականի),
  - 9) Իրավաբանական անձանց դեպքում նաև տնօրենի կամ վերջինիս պարտականությունները կատարող անձի անձնագրի լուսապատճեն, կամ վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցչի լիազորագրի էլեկտրոնային եղանակով ստորագրված լիազորագիրը, անձը հաստատող փաստաթղթեր:
  - 10) Իրավաբանական անձանց դեպքում գործունեության իրականացման վայրը, եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից,
  - 11) Իրավաբանական անձանց դեպքում կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթ,
  - 12) Բանկային քարտի կցում:
- 2.2. Տվյալները մուտքագրելուց և Կայքում գրանցվելուց հետո գեներացվում է նույնականացնող համարանիշ (ID), որով մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցել Էլեկտրոնային աճուրդի:
- 2.3. Կայքում գրանցված մասնակցի նույնականացումը իրականացվում է Կազմակերպության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ընթացակարգի (FC1630PRC#01) համաձայն:

### 3. ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

- 3.1. Սպասվելիք Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը տեղադրվում է Կազմակերպության պաշտոնական կայքէջում (fastcredit.am) և Կայքում՝ Աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն երկու օր առաջ:
- 3.2. Կազմակերպության Գույքի բռնագանձումների ծառայությունը կազմակերպում և հետևում է, որպեսզի Կազմակերպության պաշտոնական կայքէջում և Կայքում նշված ժամանակահատվածում տեղադրվի Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:
- 3.3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը ներառում է.
  - 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,
  - 2) Կազմակերպության անվանումը,
  - 3) աճուրդի ձևը և անցկացման կարգը
  - 4) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, լոտի ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի
  - 5) մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմաններ,
  - 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
  - 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը,
  - 8) կազմակերպչի կողմից սահմանված Մասնակցության վճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները,



9) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի հերթականությունը:  
3.4. Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի ապահովման միջոց հանդիսացող և իրացման ենթակա գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարտադիր ներառի լուսանկարներ:

**4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՃՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

4.1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին մասնակցելու նպատակով Կայքում գրանցված մասնակիցը մինչև Աճուրդի նախորդ օրը՝ ժամը 16:00-ն ներկայացնում է Աճուրդին մասնակցության հայտ՝ Կայքում համապատասխան պատուհանի միջոցով: Հայտը ներկայացվում է յուրաքանչյուր աճուրդի համար:

4.2. Մինչև տվյալ լոտի աճուրդի ավարտը մասնակիցն ինքն է կատարում հերթական գնային առաջարկները: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Աճուրդի հաղթողը որոշվում է ավտոմատ համակարգի միջոցով:

4.3. Աճուրդը հաղթած օգտատիրոջ անձնական հաշվում ավտոմատ գեներացվում է Արձանագրություն Հավելված 1 բովանդակությամբ (**APD#01(FC1040PRC#02)**), որը հաստատելուց հետո, այն համարվում է ստորագրված: Արձանագրությունը հաստատելուց (ստորագրելուց) հետո Աճուրդում հաղթած մասնակիցը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վճարում է գնված լոտի գինն ամբողջությամբ, իսկ Մասնակցության վճարը(առկայության պարագայում) հաղթած լոտերի վերջնական հանձնումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ապաստացվում է: Օգտատիրոջ անձնական հաշվում առկա վճարման կոճակով օգտատերը Կայքին կցված բանկային քարտով կամ այլ քարտով կկարողանա վճարել հաղթած և արձանագրությունով հաստատված լոտերի դիմաց:

4.4. Օգտատիրոջ ցանկությամբ արձանագրությունով հաստատված լոտերի դիմաց վճարումը կարող է կատարվել բանկային փոխանցման միջոցով՝ նշելով արձանագրության համարը և հաղթած մասնացի անուն/ազգանունը, ինչպես նաև վճարահաշվարկային համակարգերի միջոցով:

4.5. Աճուրդի արձանագրությունը ստորագրելուց (հաստատելուց) հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում հաղթած լոտի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում, ինչպես նաև լոտի գինն ամբողջությամբ վճարելուց հետո սահմանված ժամկետներում չներկայանալու, առուվաճառքի պայմանագիր և հանձնման-ընդունման ակտը չստորագրելու դեպքերում գործարքը չեղարկվում է, իսկ Մասնակցության վճարը (առկայության դեպքում) գանձվում է որպես տուգանք: Բացառություն են կազմում 4.9 և 4.12 և կետերում նշված դեպքերի, որոնց ժամանակ գործարքը չկայանալիս ոչ միայն վերադարձվում է գնված լոտի գինն ամբողջությամբ, այլ նաև ապաստացվում է Մասնակցության վճարը (առկայության դեպքում) 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

4.6. Հաղթած լոտ(եր)ի գինն ամբողջական Աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում Աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր (Հավելված 2 **APD#02(FC1040PRC#02)**):

4.7. Մինչև 300.000 ՀՀ դրամ հանրագումարային հաղթած լոտերի առուվաճառքի պայմանագիրը գեներացվում է օգտատիրոջ անձնական հաշվում, որը առցանց տարբերակով հաստատվում է (ստորագրվում է) օգտատիրոջ կողմից: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448 հոդվածի, 450 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև 454 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, առուվաճառքի



պայմանագիրը համարվում է ստորագրված/կնքված օգտատիրոջ հաշվում գեներացված պայմանագրի համապատասխան վայրում հաստատման կոճակը սեղմելուց հետո:

4.8. 300,000 և ավել << դրամ հանրագումարային հաղթած լուտերի առուվաճառքի պայմանագիրը կնքվում է Կազմակերպության տարածքում: Մինչև գույքի առուվաճառքի պայմանագրի կազմումը Գույքի բռնագանձումների ծառայության աշխատակիցը նույնականացնում է Աճուրդը հաղթած մասնակցին համեմատում է Կայքում գրանցված օգտատիրոջ տվյալների հետ և անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում տեղեկացնում Գույքի բռնագանձումների ծառայության ղեկավարին:

4.9. Հայտնաբերված անհամապատասխանությունները տեխնիկական բնույթի լինելու դեպքում Գույքի բռնագանձումների ծառայության ղեկավարը և/կամ նրա կողմից իրավասություն ստացած աշխատակիցը Կայքում խմբագրում է օգտատիրոջ տվյալները: Այն դեպքերում, երբ անհամապատասխանությունները կասկածներ են հարուցում Աճուրդը հաղթած մասնակցի ինքնության վերաբերյալ, ապա գույքի առուվաճառքի պայմանագիր չի կնքվում:

4.10. Աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, երկկողմանի (Գույքի բռնագանձումների ծառայության ղեկավարի և Աճուրդի հաղթողի կողմից) ստորագրված հանձնման-ընդունման ակտի (Հավելված 3 **APD#03(FC1040PRC#02)**) հիման վրա իրականացնում է գույքի հանձնում:

4.11. Մինչև հանձնման-ընդունման ակտը ստորագրելը Աճուրդը հաղթած մասնակիցը պարտավոր է ուսումնասիրել հաղթած լուտը:

4.12. Հաղթած մասնակցի կողմից գնված լուտի (հարգ, քաշ, տեսք և այլն) անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում իր ցանկությամբ գործարքը կարող է չկայանալ:

4.13. Վերջին 1 ամսվա ընթացքում երեք անգամ Աճուրդում հաղթող, սակայն սահմանված ժամկետներում աճուրդի արձանագրությունը չհաստատած, առուվաճառքի պայմանագիրը չկնքած և/կամ գույքը ձեռք չբերած (հանձնման-ընդունման ակտի հիման վրա) օգտատիրոջ հաշիվը (account) մինչև 3 ամսով կարող է արգելափակվել:

4.14. Մինչև հաղթած լուտի հանձնվումը՝ աշխատակիցը Կազմակերպության FCBank համակարգում ստեղծում է հաճախորդ օգտատիրոջ անունով, Եթե վերջինս չի հանդիսանում Կազմակերպության հաճախորդ:

## 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ


5.1. Սույն Ընթացակարգի տիրապետող է հանդիսանում Կազմակերպության Գույքի բռնագանձումների ծառայությունը:

5.2. Սույն Ընթացակարգը հանդիսանում է «Հրապարակային սակարկությունների մասին» << օրենքի 4.1. գլխով պահանջվող էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդի կանոնակարգը:

5.3. Աճուրդի մասնակիցների բողոք-պահանջների դիտարկման և գումարների փոխատուցման գործընթացները ներկայացված են Կայքի համապատասխան բաժնում:

5.4. Սույն Ընթացակարգի հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը հաստատվում են Տնօրինության կողմից և դրանց խմբագրումը կամ նոր փաստաթղթի ձևավորումը չի հանգեցնում Ընթացակարգի խմբագրությանը:

5.5. Սույն Ընթացակարգի հաստատմանը հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում

	<p>Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդների ընթացակարգ</p>	FC1040PRC#02
		PUBLIC
		20/07/2022

Ռազմավարության, նախագծերի կառավարման և մեթոդաբանության ծառայությունը CBA Net համակարգով ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ:

### ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմբագրության հերթական համար	Խմբագրության ամսաթիվ և որոշման համար	Խմբագրության բովանդակություն
	Տնօրինության 2022 թ.-ի մայիսի 23-ի թիվ <b>FC0004DEC#22/05/23-01</b> որոշում	
1	Տնօրինության 2022 թ.-ի հուլիսի 20-ի թիվ <b>FC0004DEC#22/07/20-01/01</b> որոշմամբ	<p>1. Ավելացվել է՝</p> <ul style="list-style-type: none"> <li>Աճուրդում մասնակցության վճարի կիրառումը,</li> <li>Գնված լոտի գինը Կայքի, ինչպես նաև բանկային փոխանցման և վճարահաշվարկային համակարգերի միջոցով վճարելու հնարավորությունը:</li> </ul> <p>2. Խմբագրվել է 4.3 կետը:</p> <p>3. Ավելացվել է 4.14 կետը:</p>





Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող  
աճուրդների ընթացակարգ

FC1040PRC#02

PUBLIC

20/07/2022

<b>Հաստատեց</b>	<b>Ներկայացրեց</b>
<b>Գործադիր տնօրեն/Տնօրինության նախագահ</b>	<b>Գույքի բռնագանձումների ծառայության ղեկավար</b>
<b>Դանիել Ազատյան</b>	<b>Արտավազ Թառոյան</b>